**Արձանագրություն N 2**

***2025 թվականի Առողջապահության նախարարության կարիքների համար հակավիրուսային դեղի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/6» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի***

ք. Երևան

«09» «Դեկտեմբերի» 2024թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Հ. Մնացականյան |
| Հանձնաժողովի անդամներ | Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Սարգսյան |

***1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Հ. Մնացականյան)***

Ընդունել ի գիտություն, որ 29.10.24թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2024 թվականի նոյեմբերի 14-ին, ժամը 12:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2024 թվականի նոյեմբերի 15-ին ժամը 12:00-ին: 2024 թվականի նոյեմբերի 18-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Վիոլետա Բժշկական կենտրոն» ՍՊԸ | usnuntsmarine@gmail.com | 00214672 |
| 2 | «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ | tender@theopharma.am | 00471216 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

---

***(Հ. Մնացականյան)***

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «Վիոլետա Բժշկական Կենտրոն» ԱՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Մասնավորապես հիմք ընդունելով Ֆինանսների նախարարության 15.02.2024թ. թիվ 03/12-1/2884-2024 գրությունը՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 67-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը առցանց եղանակով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ կանխիկ փողի տեսքով վճարված հայտի ապահովման իսկությունը ստուգելու նպատակով CLIENT-TREASURY ծրագրային համակարգով, որի արդյունքում պարզ է դարձել, որ հրավերի պահանջով 900008000466 հաշվեհամարին առկա չէ «Վիոլետա Բժշկական Կենտրոն» ԱՊԸ-ի կողմից վճարված հայտի ապահովման գումարը՝ 6,583,290 ՀՀ դրամ գումարը:

Սույն թվականի դեկտեմբերի 6-ին «Վիոլետա Բժշկական Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքը առ այն, որ «Վիոլետա Բժշկական Կենտրոն» ՍՊԸ-ի 1570063740500100 հաշվից ձևակերպվել է 6,583,290.00 ՀՀ դրամի չափով փոխանցում դեպի 900008000466 հաշվին, սակայն նշված փոխանցումը «Վիոլետա Բժշկական Կենտրոն» ՍՊԸ-ի հաշիվներին հարկային արգելանք կիրառված լինելու հիմքով (թիվ 42238 հարկային արգելանք) չի կատարվել (կցվում է):

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

***3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

---

***(Հ. Մնացականյան)***

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Վիոլետա Բժշկական Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան և ենթակա է մերժման:

**Որոշեց.** Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները մերժել «Վիոլետա Բժշկական Կենտրոն» ՍՊԸ-ի հայտը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***4. Մասնակիցների առաջարկած գների մասին***

---

***(Հ. Մնացականյան)***

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 15.11.2024թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***5. Ընթացակարգի ամփոփման մասին***

---

***(Հ. Մնացականյան)***

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/6» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/6» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 10.12.2024թ.-ից մինչև 19.12.2024թ. ներառյալ ժամանակահատվածը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------- Հ. Մնացականյան

Անդամներ՝ ---------------------- Ն. Հարությունյան

---------------------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------------------- Հ. Սարգսյան

2025 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք դեղի Հեպատիտ C վերաբերյալ
վերջնական գներով 15.11.24թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

| NN | Դեղի անվանումը | Քանակ | Նախահաշվային | | «Վիոլետա Բժշկական Կենտրոն» ՍՊԸ | | | | | «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | Միավորի գին | Գումար | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Հեպատիտ C/ սոֆոսբուվիր | 210,000 | 626.98 | 131,665,800 | 91,000,000 | 18,200,000 | 109,200,000 | 433.33 | 520.00 | 100,940,795.04 | 20,188,159 | 121,128,954.04 | 480.67 | 576.80 |

AMERIABANK

06/12/2024
ՀՀ, ք. Երևան

**CMO.AB.723.11RBD.MNG.0.2489.24**
06/12/2024
**RA, Yerevan**

## Տեղեկանք

Տրվում է <<Վիոլետա Բժշկական Կենտրոն>> ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00214672//այսուհետ Ընկերություն/՝ ի դեմս տնօրեն Ռուբեն Սարգսյանի /անձն. AU0224961, 004, 07/04/21/, առ այն, որ 15/11/2024 թ.-ին Ընկերության 1570063740500100 հաշվից ձևակերպել է 6,583,290.00 ՀՀ դրամի չափով փոխանցում դեպի 900008000466 հաշիվը, սակայն, չնայած նրան, որ 15/11/2024թ-ի օրվա վերջի դրությամբ Ընկերության հաշվին առկա է եղել 10,321,585.84 ՀՀ դրամի չափով գումար, փոխանցումը Ընկերության հաշիվ/ներ/ին հարկային արգելանք կիրառված լինելու հիմքով /թիվ 42238 հարկային արգելանք/ չէր կարող կատարվել:

Իրավասու անձ՝

**(ստորագրություն)**
**(Կ.Տ.)**

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou